ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մյասնիկյան համայնք , Մյասնիկյան 11 ,հեռ.0233 74 6-73

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«4» դեկտեմբերի 2019 թվականի թիվ 76-Ա

ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասով,14-րդ հոդվածի 6-րդ մասով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյանի համայնքի ավագանու 2019թվականի դեկտեմբերի 4-ի N11 արտահերթ նիստի օրակարգը համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝	*ԿՈՂՄ*	*ԴԵՄ*	*ՉԵՌՆՊԱՀ*
Ն.Եղիկյան			
Ս.Հովհաննիսյան			
Ջ. Զոհրաբյան			
Ս.Նազարյան			
Ն. Գրիգորյան			
Ա. Սարգսյան			

Համայնքի ղեկավար՝ Տ.Բաղդասարյան

2019թվականի դեկտեմբերի 4,
Հ.Մյասնիկյան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի
ավագանու 2019թվականի դեկտեմբերի 4-ի
թիվ 11 արտահերթ նիստի N 76-Ա որոշման

ՕՐԱԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4-Ի ԹԻՎ 11 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

1. Ավագանու նիստի օրակարգի հաստատման մասին /զեկուցեց՝ Տ.Բաղդասարյանը/.
2. Մյասնիկյան համայնքի ղեկավարի 2020թվականի պաշտոնական դրույքաչափը հաստատելու մասին /զեկ.՝ Գ.Գրիգորյանը/.
3. Մյասնիկյան համյանքի տարածքում 2020թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին/զեկ.Տ.Բաղդասարյանը/.
4.Մյասնիկյան համայնքի ավագանու 2018թվականի դեկտեմբերի 19-ի N74-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու և 2019թվականի հոկտեմբերի 14-ի ավագանու N 70-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին/զեկ.Լ.Սմբատյանը/.
5.Մյասնիկյան համայնքի համայնքապետարանի և ենթակա կազմակերպությունների սեփականության 2019թվականի գույքագրման ամփոփ արդյունքները հաստատելու մասին /զեկ.Գ.Գրիգորյան/.

Աշխատակազմի քարտուղար՝ Ա.Խաչատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մյասնիկյան համայնք , Մյասնիկյան 4 ,հեռ.0233 74 6-73

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«4»դեկտեմբերի 2019 թվականի N 77 –Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի դրույթներով, ***համայնքի ավագանին որոշում է.***

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի ղեկավարի պաշտոնական դրույքաչափը 343.5ՀՀ հազ.դրամ՝ 2020թվականի օրացուցային տարվա համար:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ ԿՈՂՄ		*ԴԵՄ*	*ՁԵՌՆՊԱՀ*
Ն.Եղիկյան			
Ս.Հովհաննիսյան			
Ջ. Զոհրաբյան			
Ս.Նազարյան			
Ն. Գրիգորյան			
Ա. Սարգսյան			

Համայնքի ղեկավար՝ Տ.Բաղդասարյան

2019թվականի դեկտեմբերի 4,
Համայնք Մյասնիկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մյասնիկյան համայնք , Մյասնիկյան 4 ,հեռ.0233 74 6-73

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«4» դեկտեմբերի 2019 թվականի N 78 –Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետով, 12-րդ և 14-րդ հոդվածով սահմանված դրույթներով, <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի սահմանված դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2019թվականի դեկտեմբերի 2-ի փորձագիտական եզրակացությունը ,համայնքի ավագանին որոշում է.

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի վարչական տարածքում 2020թվականի օրացուցային տարվա համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝	ԿՈՂՄ	ԴԵՄ	ՉԵՌՆՊԱՀ
Ն.Եղիկյան			
Ս.Հովհաննիսյան			
Զ. Զոհրաբյան			
Ս.Նազարյան			
Ն. Գրիգորյան			
Ա. Սարգսյան			

Համայնքի ղեկավար՝ Տ.Բաղդասարյան

2019թվականի դեկտեմբերի 4,
Համայնք Մյասնիկյան

ՊԵՏԱԿԱՆ ՖՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 19-ի «Մյասնիկյան համայնքի 2019 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 74-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի վարչական տարածքում 2020 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին» որոշումների նախագծերի վերաբերյալ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 19-ի «Մյասնիկյան համայնքի 2019 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 74-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման նախագծի՝

1/ վերնագիրն անհրաժեշտ է խմբագրել և վերաշարադրել՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները, մասնավորապես անհրաժեշտ է նշել փոփոխվող իրավական ակտի կրճատ անվանումը.

2/ նախաբանն անհրաժեշտ է խմբագրել և վերաշարադրել՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջները, մասնավորապես՝ «31.10.2019» թվերն անհրաժեշտ է փոխարինել «2019 թվականի հոկտեմբերի 31-ի» բառերով:

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի վարչական տարածքում 2020 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին» որոշման նախագծի՝

1/ 2-րդ կետի բ/ և գ/ պարբերություններից անհրաժեշտ է հանել «1-ին մասի» բառերը.

2/ 2-րդ կետի գ/ պարբերությունից անհրաժեշտ է հանել «սույն օրենքի իմաստով» բառերը.

3/ Տեղական վճարների դրույքաչափերի 3-րդ կետի բ/ ենթակետի դրույթները չեն բխում «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներից:

Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի
Մյասնիկյան համայնքի ավագանու
2019թ դեկտեմբերի 4-ի թիվ 11 արտահերթ
նիստի N 78-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020 Թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

N	*ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ*	Տեղական տուրքերի և վճարների դրույքաչափը (դրամ)
1)	Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ ա. Հիմնական շենքերի և շինությունների համար՝ - մինչև 300 մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝	15000
	բ. սույն կետի <<ա>> ենթակետով չսահմանված շենքերի և շինությունների համար՝ - 200-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ - - 500-ից մինչև 1000 քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ -1000-ից մինչև 3000քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ -3000-ից և ավել քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝ - մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ - 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների,	30000 50000 50000 100000 3000 5000

2)	վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի)թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝ ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացումը կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ բ.բացի շենքրի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա,բացի սույն կետի<<ա>> ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝շենքեր և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով. գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.	3000
3)	Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման(բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար տեղական տուրք սահմանվում է՝	5000
4)	Համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝	200000
5)	Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի,մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝	60000
6)	Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առուվաճառք իրականացնելու թույլտվության համար, օրացուցային տարվա համար	50000
7)	Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և /կամ/ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝	

	ա.ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար յուրաքանչյուր եռամսյակի համար՝ - մինչև 26քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում՝ - 26-ից 50քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի թույլտվության համար՝ - 50-ից մինչև 100քմ մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում թույլտվության համար՝ - 100-ից մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի թույլտվության համար՝ - 200-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում թույլտվության համար՝ - 500 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում թույլտվության համար՝ բ.ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար յուրաքանչյուր եռամսյակի համար՝ -մինչև 26քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում՝ - 26-ից մինչև 50քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի թույլտվության համար՝ - 50-ից մինչև 100քմ մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում թույլտվության համար՝ - 100-ից մինչև 200քմ մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում՝ - 200-ից մինչև 500քմ քմ մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում թույլտվության համար՝ - 500 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում թույլտվության համար՝	5000 10000 13000 20000 25000 45000 3000 10000 13000 20000 25000 45000
8)	Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում բացօթյա առևտրի թույլտվության համար յուրաքանչյուր օրվա համար 175 դրամ 1քմ-ի համար.	
9)	1.Համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանում է՝ ա.հիմնական շինությունների ներսում՝ - մինչև 26քմ մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ - 26-ից մինչև 50 քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ - 50-ից մինչև 100քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ - 100-ից մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ բ.ոչ հիմնական շինությունների ներսում՝ - մինչև 26քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ - 26-ից մինչև 50քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի	2500 5000 10000 15000 1000

	համար՝	
	- 50-ից մինչև 100քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	1500
	- 100-ից մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	2000
	- 200-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	4000
10)	Համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար յուրաքանչյուր ամիս 1քառակուսի մետրի համար՝	8000
	ա.ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝	
	բ. թունդ ալկոհոլային սպիրտի պարունակությունը 20 և ավել ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝	2000
	գ. Սոցիալական գովազդի համար՝	3500
	դ.այլ արաքին գովազդի համար՝	0
	ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25%-ի չափով,	1500
	զ. Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխվել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10%-ի չափով.	
11)	համայնքի վարչական տարածքում մարդատար- տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝	10000
12)	Համայնքի վարչական տարածքում քաղաքացական հոգեհանգստի ծիսակատարության ծառայությունների իրականացման և մատուցման թույլտվության համարօրացուցային տարվա համար՝	500000
	<u>ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ</u>	
	1)Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալությամբ տրամադրելու դեպքում փաստաթղթերի նախապատրաստման համար համայնքի մատուցած ծառայությունների համար՝	5000
	2)Տեղական ինքնակառավարման մարմնի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար՝	5000
	3)համայնքի կողմից աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար տեղական վճարը սահմանվում է՝	
	ա.ըստ հաշվառված անձանց քանակի համայնքում հաշվառում ունեցող և/կամ/բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսական՝	100
	բ.ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝	10

	4)համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի շինարարական խոշոր աղբի հավաքման և փոխադրման համար՝ 5)համայնքի տարածքում իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի աղբահանության համար մատուցվող ծառայությաունների համար տեղական վճար է սահմանվում՝ ա)առևտրի ,հանրային սննդի և բնակչության այլ ծառայությունների ոլորտում՝ 1քառ.մետրի համար 50 դրամ բ)արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների համար՝ 1քառ.մետրի համար 5 դրամ գ)կրթական,մշակույթային,առողջապահական,սպորտային,գիտահետազոտական շինությունների համար՝ 1քմ համար 5 դրամ.	1000
	6) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ տրամադրելու համար՝ 1.Սույն դրույքաչափերի սահմանված վճարներից ազատվում են՝ ա/զոհված ազատամարտիկների ընտանիքի անդամները, բ/ հաշմանդամ դարձած ազատամարտիկները և նրանց ընտանիքի անդամները, ովքեր բնակվում են և կամ հաշվառված են նույն բնակարանում:	0

Աշխ.մի քարտուղար՝ Ա.Խաչատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մյասնիկյան համայնք , Մյասնիկյան 4 ,հեռ.0233 74 6-73

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«4» դեկտեմբերի 2019 թվականի N 79 –Ն

ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի ԹԻՎ 74-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՎԱԳԱՆՈՒ 2019ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N 70-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական 19.նոյեմբերի 2019թվականի եզրակացությունը, համայնքի ավագանին որոշում է.

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի ավագանու 2018թվականի դեկտեմբերի 19-ի<<Մյասնիկյան համայնքի 2019թվականի բյուջեն հաստատելու մասին>>թիվ 74-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն՝

1)Վարչական բյուջեի 05-1-1 հատվածի 4213 հոդվածից 810.0 հազ. դրամ պակասեցնել և ուղղել՝

ա. 01-1-1 հատվածի 4112 հոդվածին 610.0 հազար դրամ

բ. 01-6-1 հատվածի 4241 հոդվածին 200.0հազար դրամ

2) Ֆոնդային բյուջեյի 09-1-1 հատվածի 5113 հոդվածից 1870.0հազ. դրամ պակասեցնել և ուղղել՝

ա. 09-1-1 հատվածի 5134 հոդվածին 400.0 հազար դրամ

բ. 04-5-1 հատվածի 5134 հոդվածին 800.0 հազար դրամ

գ. 08-2-3 հատվածի 5134 հոդվածին 670.0 հազար դրամ

2.ՈՒԺը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի ավագանու 2019թվականի հոկտեմբերի 14-ի N70-Ն որոշումը:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝	ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
Ն.Եղիկյան			
Ս.Հովհաննիսյան			
Ջ. Զոհրաբյան			
Ս.Նազարյան			
Ն. Գրիգորյան			
Ա. Սարգսյան			

Համայնքի ղեկավար՝ Տ.Բաղդասարյան

2019թվականի դեկտեմբերի 4,
Համայնք Մյասնիկյան

ՊԵՏԱԿԱՆ ՖՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 74-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 74-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» որոշման նախագծի վերնագրում «լրացում» բառն անհրաժեշտ է փոխարինել «փոփոխություններ» բառով՝ նկատի ունենալով նախագծի 1-ին կետի դրույթները:

Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մյասնիկյան համայնք , Մյասնիկյան 4 ,հեռ.0233 74 6-73

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«4» դեկտեմբերի 2019թվականի թիվ N 80-Ա

ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ԵՆԹԱԿԱ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2019ԹՎԱԿԱՆԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՄՓՈՓ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 32-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 2019թ նոյեմբերի 7-ի N 29-Ա կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի կողմից կազմված գույքագրման ամփոփ արդյունքները, համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի համայնքապետարանի և ենթակա կազմակերպությունների 2019թվականի ամենամյա գույքագրման և դուրս գրման փաստաթղթերը՝ համաձայն հավելվածների:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ ԿՈՂՄ		*ԴԵՄ*	*ՉԵՌՆՊԱՀ*
Ն.Եղիկյան			
Ս.Հովհաննիսյան			
Ջ. Զոհրաբյան			
Ս.Նազարյան			
Ն. Գրիգորյան			
Ա. Սարգսյան			

Համայնքի ղեկավար՝ Տ.Բաղդասարյան

2019թվականի դեկտեմբերի 4,
Համայնք Մյասնիկյան